# Դրամաշնորհային հաշվետվություն N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-5/24 ԼՂՀ

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը՝** | Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում. Ստեփանավան |
| **Դրամաշնորհի N** | N ԴՏՊ-1160-11012/ԼՄՍ-5/24 ԼՂՀ |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Լիարժեք կյանք» ներառական հասարակության խթանման հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակատված** | 01.02.2024 – 31.12.2024 |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.07.2024 – 30.09.2024 |
| **Ներկայացման օր** | 10.10.2024 |
| **Հաշվետվության պատասխանատու** | Տաթևիկ Ղազարյան<br>Ծրագրի համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

### 2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների շրջանակներում կատարման ենթական գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար

**Միջոցառում 1.** Շահառուների ընդունելության կազմակերպում բազմամասնագիտական թիմի կողմից, կարիքների բազմակողմանի գնահատում ԱՀԿ ՖՄԴ մեթոդաբանությամբ:
**Միջոցառում 2**. Գնահատման արդյունքում սոցիալ-վերականգնողական անհատական և խմբային ծրագրերի կազմում:
**Միջոցառում 3**. Սոցիալ-հոգեբանական վերականգմանն ուղղված ծառայությունների տրամադրում:
**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտություններ զարգացնող խմբակներում:
**Միջոցառում 5.** Հանրային միջոցառումներ և ԶԼՄ լուսաբանում:
**Միջոցառում 6.** Անկախ կյանքի դրական ծնողավարման վերաբերյալ թրեյնինգներ, սեմինարներ երիտասարդների և նրանց ընտանիքների համար:
**Միջոցառում 7.** Իրավաբանական խորհրդատեղեկատվական աջակցություն ընտանիքներին առողջապահական, սոցիալական և կրթական հարցերի շուրջ: Ազատ ժամանցի և մշակույթային միջոցառումների կազմակերպում:
**Միջոցառում 8.** Շահառուների 7-օրյա ամառային հանգիստ «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում
**Միջոցառում 9.** Ծրագրի մշտադիտարկում և գնահատում:

2.2 **Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի /Գանտի աղյուսակ/ և միջոցառումներ, նշելով՝ Ձեր կողմից կատարված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար:**
**Միջոցառում 1.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 1/ հաշվետու ժամանակահատվածում նոր շահառուների ընդունելության չի իրականացվել:

Գործողությունը 1-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:
**Միջոցառում 2**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 2/ անձի կարիքների բազմակողմանի գնահատման արդյունքում բազմամասնագիտական թիմի կողմից նոր սոցիալ-վերականգնողական անհատական ծրագիր կազմելու անհրաժեշտություն չի եղել: Գործողություն 2-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:
**Միջոցառում 3**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 3/-ի թվով **3** շահառուի տրամադրվել է սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ խմբային և անհատական պարապմունքների միջոցով, նպատակ հետապնդելով զարգացնել շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցման և շարժողական հմտությունները: Գործողություն 3-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

| | Ընդունված շահառուների թիվ | Իգական | Արական |
|---|---|---|---|
| Հուլիս | 3 | 2 | 1 |
| Օգոստոս | 3 | 2 | 1 |
| Սեպտեմբեր | 3 | 2 | 1 |

**Միջոցառում 4**. Ապահովել ցերեկային կենտրոնում շահառուների զբաղվածությունը տարբեր հմտությունների զարգացնող խմբակներում: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են արտթերապևտիկ տարբեր խմբակներ, որոնց նպատակն է զարգացնել ստեղծագործական ընդունակությունները, բարձրացնել ինքնագնահատականը, զարգացնել մանր մոտորիկան, զարգացնել թիմում աշխատելու, միմյանց օգնելու կարողությունը: Գործողություն 4-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:
**Միջոցառում 5**.

1. 26.07.2024 թ-ին կենտրոնի թվով 2 շահառուներ այցելել են Ստեփան Շահումյանի անվան տուն-թանգարանում կազմակերպված ցուցահանդեսին, որտեղ ելույթ են ունենեցել «Arar» երգի ու պարի խումբը: Երեխաները մասնակցել են ազգագրական պարի վարպետաց դասին:

**Միջոցառում 6.** Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի շահառուների թվով 2 ընտանիքի անդամների համար կազմակերպվել են հետևյալ սեմինարները՝

1. Թեմա՝ «Սթրեսի կառավարում, հաղթահարման հմտություններ», վարող, սոցիալական աշխատող՝ Անի Զաքարյան:
2. Թեմա՝ «Ինչպես վերացնել կամ նվազեցնել երեխայի թքահոսությունը», վարող, լոգոպեդ՝ Ռեգինա Բաբաջանյան:

**Միջոցառում 7.** Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 7/ հաշվետու ժամանակահատվածում թվով 3 քաղաքացու տրամադրվել է սոցիալ-իրավական, առողջապահական խնդիրներին առընչվող, պետական հավաստագրով աջակցող սարքեր և պարագաների ձեռք բերման և այլ խնդիրներին վերաբերյալ աջակցություն և խորհրդատվություն: Գործողությունը 7-ը /համաձայն աշխատանքային պլանի/ կատարված է:

**Միջոցառում 8**. Համաձայն աշխատանքային պլանի /Գործողություն 8/ կենտրոնի թվով 2 շահառու իր 7-օրյա ամառային հանգիստն են անցկացրել Ստեփանավանի «Լիարժեք կյանք» ամառային ներառական ճամբարում:
**Միջոցառում 9**. Իրականացվել է ներքի գնահատում (ծրագրի 9-րդ ամսվա ավարտին) և գնահատման պատկերը հաստատական դրական է: Ծրագրի ծառայություններից օգտված շահառուների մոտ առկա է 95 % դրական դինամիկա, կյանի որակի դրական փոփոխություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝**

Ստորև ներկայացվում է Ստեփանավանի կենտրոնի ամենօրյա աշխատանքները լուսաբանող ֆեյսբուքյան խմբի հղումը
https://www.facebook.com/groups/738413854220041

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատածում քաղաք դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը**

Հաշվետու ժամանակահատվածում դժվարություններ չեն առաջացել:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար**

Ծրագրի համակարգող Տ.Ղազարյան

«Լիարժեք կյանք» ՀԿ նախագահ Ј. Մաղաքյան